ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

26 օգոստոսի 2015թ. թիվ 41 -Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1273-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի 2-րդ մասով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ա. Սարգսյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ, նախագահ,

Կ. Բոյաջյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ՀՀ տրանսպորտային տեսչության Տավուշի տարածքային բաժնի պետ

Ս. Ղալթախչյան - ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի, 4-րդ սպայական վաշտի 2-րդ դասակի հրամանատար /համաձայնությամբ/

Մ. Ղալումյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,

Ռ. Պետրոսյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ,

Կ. Օթարյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ

2. Հանձնաժողովի նախագահին՝
Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1273-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ կետի պահանջներին համապատասխան հանձնաժողովի կազմից նշանակել քարտուղար՝ նրա վրա դնելով սահմանված կարգով նախատեսված պարտականությունները:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետի 2010թ. ապրիլի 28-ի՝ ՀՀ Տավուշի մարզի ներմարզային երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման մրցույթների անցկացման մասին թիվ 14-Ա կարգադրությունը:

4. Սույն կարգադրության մասին իրազեկել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը և ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչությանը:

5. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՀԱԲՈՎՅԱՆ

26 օգոստոսի 2015թ.
ք. Իջևան